ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» հոկտեմբերի 2015թ. **N ----- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՌՈՒԲԵՆ ՄԱՑԱԿԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի 2797-րդ տարեդարձի առթիվ, ստեղծագործական ակնառու հաջողությունների, Երևան քաղաքի երաժշտարվեստում ներդրած նշանակալի ավանդի և բազմամյա վաստակի համար երգիչ, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Ռուբեն Մացակի Մաթևոսյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՌՈՒԲԵՆ ՄԱՑԱԿԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ռուբեն Մացակի Մաթևոսյանը ծնվել է 1941 թվականի դեկտեմբերի 12-ին, Երևանում:

Սովորել է Երևանի Գրիբոյեդովի անվան արական, ապա Կրուպսկայայի անվան ու նաև Աճառյանի անվան դպրոցներում, միաժամանակ երաժշտական կրթություն ստացել Երևանի Սայաթ–Նովայի անվան երաժշտական դպրոցի դաշնամուրի դասարանում:

1961 թվականից մինչ օրս Հայաստանի ռադիոյի Արամ Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների վաստակավոր անսամբլի մենակատարն է:

Ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը՝ բանասերի որակավորմամբ, միաժամանակ վոկալ-մասնագիտական դասեր ստացել Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում:

1978 թվականին արժանացել է ՀԽՍՀ ժողովրդական արտիստի կոչման, 1998 թվականին՝ ՀՀ «Մովսես Խորենացի», 2011 թվականին՝ ՀՀ «Մեսրոպ Մաշտոց» մեդալների, 2007 թվականին՝ Հայ Առաքելական եկեղեցու «Սուրբ Սահակ–Սուրբ Մեսրոպ» պատվո բարձր շքանշանի, 2011 թվականին՝ «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանի:

1996 թվականից Հայաստանի ռադիոյի Արամ Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների վաստակավոր անսամբլի գեղարվեստական ղեկավարն է, Երևանի պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, ջազային և էստրադային արվեստների պետական քոլեջի դասախոս, Հայ երգարվեստի միության նախագահը:

Ելնելով վերգրյալից և հաշվի առնելով Ռուբեն Մաթևոսյանի ստեղծագործական գործունեությունը, բազմամյա վաստակը և երաժշտարվեստում ներդրած նշանակալի ավանդը՝ առաջարկվում է Ռուբեն Մացակի Մաթևոսյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում և Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՌՈՒԲԵՆ ՄԱՑԱԿԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ռուբեն Մացակի Մաթևոսյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՌՈՒԲԵՆ ՄԱՑԱԿԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ռուբեն Մացակի Մաթևոսյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ